

Էներգետիկա

Ներածություն

Էներգետիկայի բնագավառում ՀՀ օրենսդրությունը մասամբ համապատասխանում է ԵՄ օրենսդրության պահանջներին:

Հայաստանի Հանրապետությունում առկա է մեկ միասնական օրենք, որով կարգավորվում են էլեկտրական, ջերմային էներգիայի ու բնական գազի ոլորտները, և մեկ առանձին օրենք՝ միջուկային էներգիայի բնագավառը կարգավորելու համար: ԵՄ օրենսդրությունը ներառում է առանձին օրենսդրական ակտեր յուրաքանչյուր վերոհիշյալ բնագավառների համար:

Էլեկտրական և ջերմային էներգիայի ու բնական գազի բնագավառներում առկա հետևյալ օրենսդրական անհամապատասխանությունները ընդհանուր բնույթի են.

- «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը և ենթաօրենսդրական ակտերը չեն ներառում շուկայի բոլոր բաղադրիչների սահմանումները: «Էլեկտրաէներգիայի արտադրություն», «Էլեկտրական էներգիա արտադրող» հասկացությունները¹ բացակայում են «Էներգետիկայի մասին»² ՀՀ օրենքում: «Էներգախնայողության և վերականգնող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը սահմանում է «ինքնավար էներգաարտադրող»³ հասկացությունը, բայց այն վերաբերում է միայն սեփական կարիքների համար էներգիա արտադրողին:

«Ինտեգրված, համախմբված, ուղղահայաց կամ հորիզոնական ձևով միավորված ընկերություններ» հասկացությունները⁴ սահմանված չեն: Այդպիսի ընկերությունների իրավական ճանաչումը կարևոր է, քանի որ հետագայում ինչպես ԵՄ, այնպես էլ ՀՀ օրենսդրությամբ դրվում է շուկայի մասնակիցների տարանջատման պահանջը: Ընկերությունների գործառնությունների տարանջատումը շուկայի ազատականացման հիմնական պայմաններից մեկն է: ՀՀ էներգետիկայի բնագավառը կարգավորող օրենսդրական ակտերով չեն սահմանվում «փոխկապակցված ընկերություններ», ինչպես նաև «համակապակցված համակարգեր»⁵ հասկացությունները:

«Օժանդակ ծառայություններ» հասկացությունը⁶ սահմանված չէ: Շուկայի մասնակիցները չեն կարող մատուցել լրացուցիչ ծառայություններ (օրինակ՝ պահեստային հզորությունների վաճառք, պիկային հզորությունների վաճառք և այլն) և հետևաբար գրկված են օրինական լրացուցիչ եկամուտ ունենալու հնարավորությունից: «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված են մատակարարման կանոնները, բայց «մատակարարում», «մատակարարող», «մատակարարում վաճառքի և վերավաճառքի նպատակով», «բաշխման ենթակա էլեկտրական էներգիա» հասկացությունները սահմանված չեն:

Սպառողների դասակարգումը կատարված է միայն ըստ լարման խմբերի, բայց ոչ ըստ գործառնության խմբերի (վերջնական սպառող, տնային տնտեսություն, արտադրական սպառող, առևտրային սպառող, հնարավոր սպառող և այլն), հետևաբար բացակայում են «տնային տնտեսություն», «առևտրային սպառող», «արտադրական սպառող» հասկացությունները⁷: Նույնպիսի դասակարգում պահանջվում է կատարել նաև ջերմային էներգիայի և գազի սպառողների շուկաներում: Դասակարգումը թույլ է տալիս տարբեր սակագների կիրառում: Հնարավոր է ունենալ սպառողների դասակարգում, բայց մեկ սակագին:

Էներգետիկ բնագավառը կարգավորող օրենսդրության ընդհանուր անհամապատասխանությունից է նաև «համընդհանուր ծառայություն (universal service)»⁸ սկզբունքի բացակայությունը: Համընդհանուր ծառայության սկզբունքների կիրառման վերաբերյալ կարգավորող մարմինը պետք է ներկայացնի ծրագիր: Այդ սկզբունքներով նախատեսվում է, որ ցանկացած սպառող պետք է ապահովվի որակյալ, անխափան էներգիայով: Էներգիայի մատակարարումը պետք է իրականացվի ողջամիտ սակագներով, պարզ և հստակ ձևակերպված կանոններով ու թափանցիկ և անխտրական պայմաններում: Մատակարարման ընդհատումների համար պետք է սահմանված լինի փոխհատուցման համակարգ: Փոխադրման և բաշխման ցանցերի օպերատորները, համաձայն

¹ 2003թ. հունիսի 26-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/54՝ «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի համընդհանուր կանոնների մասին», OJ N. L 176, 15/07/2003թ.:

² ՀՕ-148 (ՀՀՊՏ 2001/10 (142) 22.03.2001):

³ Ինքնավար էներգաարտադրող՝ սեփական կարիքների բավարարման համար էլեկտրական և (կամ) ջերմային էներգիա, կենսագազ արտադրող իրավաբանական կամ ֆիզիկական անձ:

⁴ 2003թ. հունիսի 26-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/54՝ «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի համընդհանուր կանոնների մասին», OJ N. L 176, 15/07/2003թ.:

⁵ 2003թ. հունիսի 26-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/54՝ «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի համընդհանուր կանոնների մասին», OJ N. L 176, 15/07/2003թ.:

⁶ 2003թ. հունիսի 26-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/54՝ «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի համընդհանուր կանոնների մասին», OJ N. L 176, 15/07/2003թ.:

⁷ 2003թ. հունիսի 26-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/54՝ «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի համընդհանուր կանոնների մասին», OJ N. L 176, 15/07/2003թ.:

⁸ 2003թ. հունիսի 26-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/54՝ «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի համընդհանուր կանոնների մասին», OJ N. L 176, 15/07/2003թ.:

սահմանված պայմանների, պարտավոր են ապահովել ցանկացած սպառողի միացումը ցանցերին: Այդ պայմանները պետք է լինեն պարզ և հստակ, իսկ միացման համար վճարները և ժամկետները՝ ողջամիտ սահմաններում:

Համընդհանուր ծառայության սկզբունքը ներառում է նաև սպառողների շահերի պաշտպանությունը, մատակարարման ընդհատումների կանոնակարգումը և անվտանգությունը: ՀՀ էներգետիկ օրենսդրությամբ սահմանված չեն սպառողների խոցելի խմբերին⁹ (սոցիալապես անապահով և հեռավոր շրջանների սպառողներ) անհրաժեշտ էներգիայով ապահովելու պարտադիր դրույթը: Օրենքը թույլ է տալիս վճարում չկատարելու դեպքում անջատել էներգամատակարարումը: Այդ դեպքում օրենքը պետք է ներառի պարտադիր դրույթ սպառողների խոցելի խմբերին կենսաապահովման համար անհրաժեշտ էներգիայի (կամ բնական գազի) քանակության մատակարարման մասին:

• Երրորդ կողմի մուտքի հնարավորությունը շուկայի ազատականացման անհրաժեշտ պայմաններից է: «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է երրորդ կողմի մուտքի հնարավորություն¹⁰, որը, սակայն, չի սահմանում այդ հնարավորության իրականացման մեխանիզմները: Սահմանված չեն նաև փոխանցման և բաշխման ցանցերի հետ երրորդ կողմի միացման պայմանները, մրցույթների և թույլտվությունների տրամադրման կարգը, շուկայի այլ մասնակիցների հետ հարաբերությունները:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով պարտադրված չէ, որ ոլորտի երկարաժամկետ գործունեության ծրագիրը պետք է հաշվի առնի երրորդ կողմի մուտքի հնարավորությունը և դրա համաձայն՝ նախատեսվի ենթակառուցվածքի զարգացումը: «Ուղղահայաց և հորիզոնական ձևով ինտեգրված ընկերություններ» հասկացությունները սահմանված չեն, հետևաբար սահմանված չէ նաև դրանց տարանջատման պահանջը, ինչը անհրաժեշտ պայման է երրորդ կողմի մուտքի համար: ՀՀ օրենքում բացակայում է երրորդ կողմի մուտքը չխոչընդոտելու մասին դրույթը, ըստ որի՝ մեկ անձին տրված մուտքի թույլտվությունը չի կարող սահմանափակել մեկ այլ ընկերության իրավունքը՝ դիմելու և մուտքի իրավունք ստանալու վերաբերյալ¹¹:

• «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը չի սահմանում ոլորտի «երկարաժամկետ» և «կարճաժամկետ» հասկացությունների ժամկետների սահմանում¹²: Ըստ այդ ժամանակահատվածների՝ ՀՀ կառավարությունը պետք է մշակի էներգետիկ բնագավառի երկարաժամկետ ռազմավարական ծրագիրը (սովորաբար քսան տարվա համար): Ռազմավարական ծրագրում ներկայացվում են բնագավառի նպատակները և դրանց հասնելու ուղղությունը՝ ըստ ճյուղերի և ժամկետների: Ծրագրում հստակ նշվում են ինչպես բնագավառի, այնպես էլ նրա ճյուղերից յուրաքանչյուրի ընթացիկ նպատակակետերը:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը չի պարտադրում, որ էներգիայի արտադրության, փոխադրման և բաշխման համար տրվող լիցենզիաները ներառեն համապատասխան ճյուղերի երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրային պահանջներ¹³: Լիցենզիաների գործողության կամ պարբերական վերանայման ժամկետները պետք է համահունչ լինեն ոլորտի ռազմավարական ծրագրով սահմանված ժամկետներին, իսկ վերահսկումը կատարվի՝ համաձայն սահմանված նպատակակետերի:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը չի պահանջում, որ ոլորտում զբաղված ընկերությունները կատարեն մատակարարված էներգիայի խոշորացված հաշվետվություն՝ շրջակա միջավայրի պահպանման և էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործման վերաբերյալ¹⁴:

• Համակցված էներգիայի արտադրության¹⁵ համար անհրաժեշտ է արդյունավետության և էներգախնայողության չափանիշների համակարգի մշակումը, ինչը բացակայում է ՀՀ էներգետիկ համակարգը կարգավորող օրենսդրությամբ:

⁹ 2003թ. հունիսի 26-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/54՝ «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի համընդհանուր կանոնների մասին», OJ N L 176, 15/07/2003թ.

¹⁰ ՀՕ-148, հոդ. 53 (ՀՀ ՊՏ 2001/10 (142) 22.03.2001թ.):

¹¹ 2003թ. հունիսի 26-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/54՝ «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի համընդհանուր կանոնների մասին», OJ N L 176, 15.07.2003թ.:

¹² 2003թ. հունիսի 26-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/54՝ «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի համընդհանուր կանոնների մասին», OJ N L 176, 15.07.2003թ.:

¹³ Հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի որոշում թիվ 38՝ «Էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցերի սեփականաշնորհումից հետո տրվող լիցենզիայի մասին», ՀՀ Գ ՆԱՏ 2001/ 16 (79) 20.09.2001:

¹⁴ 2003թ. հունիսի 26-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/54՝ «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի համընդհանուր կանոնների մասին», OJ N L 176, 15.07.2003թ.:

¹⁵ 2004թ. փետրվարի 11-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2004/8՝ «Էներգետիկայի ներքին շուկայում օգտակար ջեռուցման պահանջարկի վրա հիմնված համակցված արտադրության խրախուսման մասին», OJ N L 052, 21.02.2004թ.:

Ատոմային էներգիա

Ատոմային էներգիայի ոլորտի հիմնական անհամապատասխանությունը նրանում է, որ բացակայում են անձնակազմի և ազդակիր համայնքի բնակչության՝ միջուկային վնասի փոխհատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը, այդ թվում՝ ապահովագրական հարցերին վերաբերող մեխանիզմները: Ավարտված չեն ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմի և ազդակիր համայնքի բնակչության՝ իոնացնող ճառագայթումից պաշտպանության, անվտանգության նորմերի և կանոնների մշակման աշխատանքները¹⁶:

Միջուկային, ռադիոակտիվ նյութերի և միջուկային տեղակայանքների ֆիզիկական պաշտպանության հետ կապված իրավական կարգավորումները թերի են:

«Խաղաղ մպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված չեն ռադիոակտիվ նյութերի պահպանման, նշագրման և պիտակավորման անհրաժեշտ պայմանները: «Միջուկային և ռադիոակտիվ նյութերի փոխադրման հատուկ կանոններ» ՀՀ կառավարության որոշումը սահմանում է պիտակավորման, նշագրման և պահպանման պայմաններ ռադիոակտիվ նյութերի փոխադրման համար: Նմանատիպ պայմաններ պետք է սահմանվեն նաև ռադիոակտիվ նյութեր օգտագործողների և սեփականատերերի համար¹⁷:

Հայաստանի Հանրապետության իրականությանը չհամապատասխանող նորմեր

ԵՄ օրենսդրությանը սահմանված են որոշ նորմեր, որոնք սահմանված չեն ՀՀ էներգետիկ օրենսդրությամբ, քանզի չեն առնչվում Հայաստանի իրականության հետ: Էլեկտրական էներգիայի ներքին շուկայի ընդհանուր կանոնների մասին դիրեկտիվը ունի 12 այդպիսի նորմ: Այդպիսիք են, օրինակ, «ուղղակի սնուցման լարերի» կամ «մեկուսացված միկրոհամակարգերի» մասին նորմերը¹⁸: Հայաստանում գործում է մեկ ընդհանուր էներգահամակարգ, և չկան ուղղակի սնուցման լարեր: Այդ իսկ պատճառով դրանց կառուցման և շահագործման պայմանները մշակված չեն: Սահմանված չեն նաև արտադրողից ուղղակի էլեկտրաէներգիայի ստացման պայմանները:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Էներգետիկա» գլուխը մինչև 2008 թվականի վերջը մասամբ համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությանը սահմանված չափանիշներին: Գլխում ընդգրկված 16 դիրեկտիվներից համապատասխանեցում կկատարվի 10-ի նկատմամբ: «Էներգետիկա» գլխի 1996թ. մայիսի 13-ի Խորհրդի թիվ 96/29 դիրեկտիվի¹⁹ ՀՀ օրենսդրական համապատասխանությունը կկատարվի «Սոցիալական ապահովություն» ենթագլխի շրջանակներում: 2009 թվականից սկսած՝ կհամապատասխանեցվեն մնացած հինգ դիրեկտիվները, որոք հետևյալն են.

- Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003թ. հունիսի 26-ի «Բնական գազի ներքին շուկայի համընդհանուր կանոնների մասին» թիվ 2003/55 դիրեկտիվը,
- Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003թ. հունիսի 26-ի «Էլեկտրաէներգիայի ոլորտում միջազգային փոխանակումների համացանցին միանալու պայմանների մասին» թիվ 1228/2003 կանոնակարգը,
- Եվրոպական խորհրդի 1990թ. հունիսի 29-ի «Վերջնական արդյունաբերական սպառողներին գազի և էլեկտրաէներգիայի գների գանձման թափանցիկությունը կատարելագործելու՝ համայնքի ընթացակարգի վերաբերյալ» թիվ 90/377 դիրեկտիվը,
- Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2001թ. նոյեմբերի 6-ի «Գրասենյակային սարքավորումների էներգետիկ արդյունավետության պիտակավորման ծրագրի վերաբերյալ» թիվ 2422/2001 կանոնակարգը,
- Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2002թ. դեկտեմբերի 16-ի «Շենքերի և շինությունների էներգետիկ արդյունավետության չափանիշների վերաբերյալ» թիվ 2002/91/EC դիրեկտիվը:

¹⁶ 1996թ. մայիսի 13-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 96/29՝ «Իոնացնող ճառագայթումից առաջացող վնասներից աշխատակիցների և բնակչության առողջությունը պաշտպանելու համար անվտանգության հիմնարար սկզբունքների մասին», L 159, 29.06.1996թ.:

¹⁷ 2003թ. դեկտեմբերի 22-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/122՝ «Բարձր ակտիվությամբ կապարակնքված ռադիոակտիվ աղբյուրների և տիրագործի աղբյուրների վերահսկման մասին», L 346, 31.12.2003թ.:

¹⁸ 2003թ. հունիսի 26-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/54՝ «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի համընդհանուր կանոնների մասին», OJ N L 176, 15.07.2003թ.:

¹⁹ 1996թ. մայիսի 13-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 96/29՝ «Իոնացնող ճառագայթումից առաջացող վնասներից աշխատակիցների և բնակչության առողջությունը պաշտպանելու համար անվտանգության հիմնարար սկզբունքների մասին»:

2007 թվական

Կարևորելով էներգետիկ ենթակառուցվածքի գործունեության ընդհանուր կարգավորումը՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ օրենսդրությունը կհամապատասխանեցվի Եվրոպական Միության 2004թ. ապրիլի 26-ի Խորհրդի թիվ 2004/67/EC²⁰, Խորհրդի 1968թ. դեկտեմբերի 20-ի թիվ 68/414/EEC²¹ և Խորհրդի 2003թ. դեկտեմբերի 22-ի թիվ 2003/122²² և 2004թ. փետրվարի 11-ի՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2004/8²³ դիրեկտիվներին:

Մասնավորապես, կմշակվի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշում՝ համապատասխան ԵՄ 2004թ. ապրիլի 26-ի Խորհրդի թիվ 2004/67/EC դիրեկտիվին: Այդ որոշման նախագծի մշակման համար հիմք կհանդիսանա ՀԾԿՀ-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման ժամանակավոր կանոններ» թիվ 95,08.07.2005թ. որոշումը:

Էներգետիկ շուկայի անվտանգության ապահովման համար և որպես շուկայի արտակարգ իրավիճակների կառավարում՝ կմշակվի «Չմշակված նավթի և վառելիքային նավթամթերքների անհիշքաժեշտ քանակի պահեստավորման մասին» օրենքի նախագիծ՝ համապատասխան ԵՄ 1968թ. դեկտեմբերի 20-ի Խորհրդի թիվ 68/414/EEC դիրեկտիվին: Կմշակվի նաև «Արտակարգ իրավիճակներում պահեստավորված նավթի և վառելիքային նավթամթերքների օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Իոնացնող ճառագայթման աղբյուրների կառավարումը և պետական կարգավորումը ԵՄ 2003թ. դեկտեմբերի 22-ի Խորհրդի թիվ 2003/122 դիրեկտիվներին համապատասխանեցնելու նպատակով կմշակվի «Իոնացնող ճառագայթման աղբյուրների պետական գրանցման կարգը հաստատելու մասին» թիվ 765, 16.08.2001թ. ՀՀ կառավարության որոշման փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծ:

Ինստիտուցիոնալ կարողությունները հզորացնելու նպատակով կկազմակերպվեն սեմինար-դասընթացներ՝ «Բնական գազի շուկայի բարեփոխումների տնտեսական և իրավաբանական ապահովում», «Իոնացնող ճառագայթումից առաջացող վնասներից աշխատակիցների և բնակչության առողջությունը պաշտպանելու անվտանգության չափանիշների համակարգ» և «Էներգետիկ անվտանգություն և տարատեսակավորում» թեմաներով:

Էներգիայի արտադրության արդյունավետությանը և էներգախնայողության պահանջները և պայմանները սահմանելու նպատակով կմշակվի «Էներգիայի համակցված արտադրության համար» տեխնիկական կանոնակարգի ՀԾԿՀ որոշման նախագիծ՝ համապատասխան Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004թ. փետրվարի 11-ի թիվ 2004/8 դիրեկտիվին:

2008 թվական

Էներգետիկ բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը կհամապատասխանեցվի, ԵՄ 1994թ. մայիսի 30-ի՝ Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի թիվ 94/22²⁴, Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003թ. մայիսի 8-ի թիվ 2003/30/EC²⁵ և Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1996թ. ապրիլի 22-ի թիվ 736/96²⁶ և 2001թ. սեպտեմբերի 27-ի՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2001/77²⁷ դիրեկտիվներին:

Հայաստանի Հանրապետությունում ածխաջրածնի հանքահանման, հետազոտման և արտադրման գործունեությունը կարգավորելու նպատակով կմշակվի «ՀՀ տարածքում ածխաջրածնի հանքահանման, հետազոտման և արտադրության մասին» օրենքի նախագիծ՝ ԵՄ 1994թ. մայիսի 30-ի Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի թիվ 94/22 դիրեկտիվին համապատասխան: Այդ գործունեությամբ զբաղվելու համար կմշակվի նաև «ՀՀ տարածքում ածխաջրածնի հանքահանման,

²⁰ 2004թ. ապրիլի 26-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 2004/67/EC՝ «Բնական գազի մատակարարման ներքին շուկայի պաշտպանության միջոցառումների մասին»:

²¹ 1968թ. դեկտեմբերի 20-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 68/414/EEC՝ «Անդամ երկրներում չմշակված նավթի և վառելիքային նավթամթերքների անհիշքաժեշտ նվազագույն պահեստավորման քանակի պարտավորության կիրառման վերաբերյալ»:

²² 2003թ. դեկտեմբերի 22-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/122՝ «Բարձր ակտիվությամբ կապարակված ռադիոակտիվ աղբյուրների և տիրագործի աղբյուրների վերահսկման մասին»:

²³ 2004թ. փետրվարի 11-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2004/8՝ «Էներգետիկայի ներքին շուկայում օգտակար ջեռուցման պահանջարկի վրա հիմնված համակցված արտադրության խրախուսման մասին»:

²⁴ 1994թ. մայիսի 30-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 94/22՝ «Ածխաջրածնի հանքահանման, հետազոտման և արտադրության համար թույլտվության և լիազորագրերի (լիցենզիաների) օգտագործման պայմանների մասին»:

²⁵ 2003թ. մայիսի 8-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/30/EC՝ «Տրանսպորտային բնագավառում կենսավառելիքների և վերականգնվող վառելիքների օգտագործումը խրախուսելու մասին»:

²⁶ 1996թ. ապրիլի 22-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 736/96՝ «Հանձնաժողովին տեղեկացնելու մասին նավթավառելիքային, բնական գազի և էլեկտրական էներգիայի բնագավառներում ներդրումային ծրագրերի վերաբերյալ»:

²⁷ 2001թ. սեպտեմբերի 27-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2001/77՝ «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայում վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի օգտագործման խրախուսման մասին»:

հետազոտման և արտադրության գործունեությամբ զբաղվելու լիցենզավորման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Հաշվի առնելով շրջակա միջավայրի պաշպանության խնդիրները և Հայաստանի Հանրապետության կողմից կլիմայի փոփոխության և ջերմոցային գազերի արտադրության (Կիտոսի կոնվենցիա) կոնվենցիային միանալը՝ կմշակվի «Տրանսպորտային բնագավառում կենսավառելիքների և վերականգնվող վառելիքների օգտագործման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ համապատասխան Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2003թ. մայիսի 8-ի թիվ 2003/30/EC դիրեկտիվին:

Էներգետիկ բնագավառի ներդրումները ՀՀ կառավարության և Եվրոպական Միության հետ համաձայնեցման և համակարգման նպատակով կմշակվի «Ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգը հաստատելու մասին» թիվ 56-Ն, 12.05.2004թ. ՀԾԿՀ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծ՝ համապատասխան ԵՄ 1996թ. ապրիլի 22-ի՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 736/96 դիրեկտիվին:

Ինստիտուցիոնալ կարողությունները հզորացնելու նպատակով կկազմակերպվեն սեմինար-դասընթացներ՝ «Ածխաջրածնի հանքահանման և արտադրության անվտանգության կազմակերպում» և «Տրանսպորտի բնագավառում կենսավառելիքների և վերականգնվող վառելիքների օգտագործում» թեմաներով:

Կարևորելով էներգետիկ շուկայի անվտանգությունը՝ էներգիայի աղբյուրների տարատեսակումը, ինչպես նաև «մաքուր զարգացման սկզբունքը» (clean development mechanism) կիրառելու նպատակով, համաձայն կլիմայի փոփոխության և ջերմոցային գազերի արտադրության վերաբերյալ (Կիտոսի կոնվենցիա) կոնվենցիայի, կմշակվի «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ: Օրենքի նախագիծը կմշակվի՝ համապատասխան 2001թ. սեպտեմբերի 27-ի՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2001/77 դիրեկտիվին:

«Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի փոփոխության համաձայն՝ կմշակվի նաև «Էլեկտրական էներգիայի՝ շուկայում վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի օգտագործման կարգը հաստատելու մասին» Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշման նախագիծ:

2009 թվական

ՀՀ օրենսդրության համապատասխանեցման համար հիմք կհանդիսանան ԵՄ 1976թ. հոկտեմբերի 19-ի Հանձնաժողովի թիվ 3227/76 կանոնակարգը²⁸ և ,2003թ. հունիսի 26-ի՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2003/54²⁹ դիրեկտիվները:

Եվրասատմի պահանջներին համապատասխան՝ ՀՀ միջուկային էներգիայի ներքին շուկայի անվտանգության պայմանները սահմանելու նպատակով կմշակվի «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ: Օրենքի նախագիծը կմշակվի՝ համապատասխան ԵՄ 1976թ. հոկտեմբերի 19-ի Հանձնաժողովի թիվ 3227/76 կանոնակարգին:

«Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծին համապատասխան՝ կմշակվեն նաև «Իոնացնող ճառագայթումից պաշտպանության և իոնացնող ճառագայթման աղբյուրների անվտանգության նորմերը հաստատելու մասին» և «Իոնացնող ճառագայթումից պաշտպանության և իոնացնող ճառագայթման աղբյուրների անվտանգության կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության երկու որոշման նախագիծեր:

ԵՄ օրենսդրական պահանջներին համապատասխան՝ ՀՀ էլեկտրական էներգիայի ներքին շուկան ազատականացնելու և մրցակցություն ապահովելու համար կմշակվի «Էներգետիկայի մասին» և «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագիծեր՝ համապատասխան ԵՄ 2003թ. հունիսի 26-ի՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի թիվ 2003/54 դիրեկտիվին: Կմշակվի նաև «Էլեկտրական էներգիայի շուկայի կանոնները հաստատելու մասին» ՀԾԿՀ որոշման նախագիծ:

Ինստիտուցիոնալ կարողությունները հզորացնելու նպատակով կկազմակերպվեն սեմինար-դասընթացներ՝ «Համակցված էներգիայի արտադրության կազմակերպում», «Էլեկտրական էներգիայի շուկայի բարեփոխումների տնտեսական և իրավաբանական ապահովում» և «Եվրասատմի ներքին շուկայի անվտանգության միջոցառումներ» թեմաներով:

²⁸ 1976թ. հոկտեմբերի 19-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ 3227/76՝ «Եվրասատմի ներքին շուկայի անվտանգության դրույթների կիրառման վերաբերյալ»:

²⁹ 2003թ. հունիսի 26-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2003/54՝ «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի համընդհանուր կանոնների մասին»:

1. Օրենսդրական համապատասխանեցում

NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
1	2	3	4	5	6	
2007						
1.	ՀԾԿՀ-ի «Բնական գազի մատակարարման և օգտագործման ժամանակավոր կանոններ» N95, 08.07.2005 որոշման հիման վրա «ՀՀ տարածքում բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) որոշման նախագծի մշակում	2004թ. ապրիլի 26-ի «Բնական գազի մատակարարման ներքին շուկայի պաշտպանության միջոցառումների մասին» Խորհրդի թիվ 2004/67/EC դիրեկտիվ	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	2-րդ եռամսյակ	132	Նախնական փորձաքննություն, խորհրդատվություն
2.	<ul style="list-style-type: none"> «Չմշակված նաֆթի և վառելիքային նաֆթամթերքների անհրաժեշտ քանակի պահեստավորման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում «Արտակարգ իրավիճակներում պահեստավորված նաֆթի և վառելիքային նաֆթամթերքների օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում 	1968թ. դեկտեմբերի 20-ի «Անդամ երկրներում չմշակված նաֆթի և վառելիքային նաֆթամթերքների անշրաժեշտ նվազագույն պահեստավորման քանակի պարտավորության կիրառման վերաբերյալ» Խորհրդի թիվ 68/414/EEC դիրեկտիվ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության մասնակցությամբ)	2-րդ եռամսյակ	30	
3.	Իոնացնող ճառագայթման աղբյուրների պետական գրանցման կարգը հաստատելու մասին N 765, 16.08.2001 կառավարության որոշման փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագծի մշակում	2003թ. դեկտեմբերի 22-ի «Բարձր ակտիվությամբ կապարակնրված ռադիոակտիվ աղբյուրների և տիրագործի աղբյուրների վերահսկման մասին» Խորհրդի թիվ 2003/122 դիրեկտիվ	ՀՀ բնապահպանության նախարարության	2-րդ եռամսյակ	27	Նախնական փորձաքննության, խորհրդատվության, վերապատրաստում
4.	Համակցված արտադրության համար տեխնիկական կանոնակարգի ՀԾԿՀ որոշման նախագծի մշակում	2004թ. փետրվարի 11-ի «Էներգետիկայի ներքին շուկայում օգտակար ջեռուցման պահանջարկի վրա հիմնված համակցված արտադրության խրարուման մասին» Եվրոպական պաշխմենտի և Եվրոպական խորհրդի թիվ 2004/8 դիրեկտիվ	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (ՀՀ էներգետիկայի նախարարության և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մասնակցությամբ)	3-րդ եռամսյակ	72	Նախնական փորձաքննության, խորհրդատվության, վերապատրաստում
2007, ԸՆԴԱՍԵՆԸ					261	
2008						
5.	<ul style="list-style-type: none"> «ՀՀ տարածքում ամխաջրածնի հանքահանման, հետազոտման և արտադրության մասին» ՀՀ օրենքի 	1994թ. մայիսի 30-ի «Ածխաջրածնի հանքահանման, հետազոտման և	ՀՀ բնապահպանության նախարարություն	1-ին եռամսյակ	200	Նախնական փորձաքննության,

NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
	<p>նախագծի մշակում</p> <ul style="list-style-type: none"> «ՀՀ տարածքում ածխաջրածնի հանքահանման, հետազոտման և արտադրության գործունեությանը զբաղվելու լիցենզավորման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում 	<p>արտադրության համար թույլատվության և լիազորագրերի /լիցենզիաների/ օգտագործման պայմանների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 94/22 դիրեկտիվ</p>	<p>ՀՀ էներգետիկայի նախարարություն</p>			<p>խորհրդատվության</p>
6.	<p>«Տրանսպորտային բնագավառում կենսավառելիքների և վերականգնվող վառելիքների օգտագործման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում</p>	<p>2003թ. մայիսի 8-ի «Տրանսպորտային բնագավառում կենսավառելիքների և վերականգնվող վառելիքների օգտագործումը խրախուսելու մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2003/30/EC դիրեկտիվ</p>	<p>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ բնապահպանության նախարարության մասնակցությամբ)</p>	2-րդ եռամսյակ	30	<p>Նախնական փորձաքննության, խորհրդատվություն</p>
7.	<p>Ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգը հաստատելու մասին N 56 Ն, 12.05.2004թ. ՀԾԿՀ որոշման փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագծի մշակում</p>	<p>1996թ. ապրիլի 22-ի «Հանձնաժողովին տեղեկացնելու մասին նաֆթավառելիքային, բնական գազի և էլեկտրական էներգիայի բնագավառներում ներդրումային ծրագրերի վերաբերյալ» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 736/96 դիրեկտիվ</p>	<p>ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (ՀՀ էներգետիկային նախարարության, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության մասնակցությամբ)</p>	2-րդ եռամսյակ	15	<p>Նախնական փորձաքննության, խորհրդատվության</p>
8.	<ul style="list-style-type: none"> «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում «Էլեկտրական էներգիայի շուկայում վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀԾԿՀ որոշման նախագծի մշակում 	<p>2001թ. սեպտեմբերի 27-ի «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայում վերականգնվող աղբյուրներից արտադրվող էլեկտրաէներգիայի օգտագործման խրախուսման մասին» Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի թիվ 2001/77 դիրեկտիվ</p>	<p>ՀՀ էներգետիկայի նախարարություն (ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով)</p>	4-րդ եռամսյակ	270	<p>Նախնական փորձաքննության, խորհրդատվության</p>
2008, ԸՆԴԱՄԵՆԸ					515	
2009						
9.	<ul style="list-style-type: none"> «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում 	<p>1976թ. հոկտեմբերի 19-ի «Եվրատոմի ներքին շուկայի անվտանգության դրույթների կիրառման վերաբերյալ»</p>	<p>ՀՀ բնապահպանության նախարարության</p>	1-ին եռամսյակ	72	<p>Նախնական փորձաքննության, խորհրդատվության Եվրատոմի ներքին</p>

NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
	<ul style="list-style-type: none"> «Իոնացնող ճառագայթումից պաշտպանության և իոնացնող ճառագայթման աղբյուրների անվտանգության նորմերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի մշակում: 	Հանձնաժողովի թիվ 3227/76 կանոնակարգ				շուկայի անվտանգության մասնագետ
10.	<ul style="list-style-type: none"> «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում «Էլեկտրական էներգիայի շուկայի կանոնները հաստատելու մասին» ՀԾԿՀ որոշման նախագծի մշակում 	2003թ. հունիսի 26-ի «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի համընդհանուր կանոնների մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 2003/54 դիրեկտիվ	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (ՀՀ էներգետիկայի նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն)	2-րդ եռամսյակ	792	Նախնական փորձաքննության, խորհրդատվության
2009, ԸՆԴԱՄԵՆԸ					864	
2007 – 2009 ԸՆԴԱՄԵՆԸ					1 640	

2. Ինստիտուցիոնալ կարողություններ

NN ը/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
	1	2	3	4
1.	ՀՀ Էներգետիկայի նախարարություն ՀՀ առևտրի և տնտեսական գարգացման նախարարություն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	-	Էներգետիկ անվտանգության և տարատեսակավորման վերաբերյալ սեմինար դասընթաց (3 օր/ 2007թ)	
2.	ՀՀ Էներգետիկայի նախարարություն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	-	<ul style="list-style-type: none"> Բնական գազի շուկայի բարեփոխումների, դրանց տնտեսական և իրավաբանական ապահովման վերաբերյալ դասընթացների կազմակերպում (5 օր/ 2007թ) Համակցված էներգիայի արտադրության կազմակերպման վերաբերյալ դասընթաց (5 օր/ 2009թ) Էլեկտրական էներգիայի շուկայի բարեփոխումների տնտեսական և իրավաբանական ապահովման վերաբերյալ դասընթացների կազմակերպում (5 օր/ 2009թ) 	
3.	ՀՀ Էներգետիկայի նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն	-	Ածխաջրածնի հանքահանման և արտադրության անվտանգության կազմակերպման վերաբերյալ դասընթացներ (5 օր/ 2008թ)	
4.	ՀՀ Էներգետիկայի նախարարություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	-	Տրանսպորտի բնագավառում կեսավառելիքների և վերականգնվող վառելիքների օգտագործման վերաբերյալ սեմինար դասընթացներ (3 օր/ 2008թ)	
5.	ՀՀ բնապահպանության նախարարություն	-	<ul style="list-style-type: none"> Իոնացնող ճառագայթումից առաջացող վնասներից աշխատակիցների և բնակչության առողջությունը պաշտպանելու անվտանգության չափանիշների համակարգի վերաբերյալ դասընթացների կազմակերպում (5 օր/ 2007թ) Եվրոատոմի ներքին շուկայի անվտանգության միջոցառումների վերաբերյալ սեմինար դասընթաց (3 օր/ 2009թ) 	